# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան <<13>> սեպտեմբերի 2016թ

Երևանի N6 արհեստագործական պետական ուսումնարանը /այսուհետև Պատվիրատու/ ի դեմս տնօրեն Ս. Գրիգորյանի, մի կողմից, և "Բյութի Պլանետ " ՍՊԸ / այսուհետ Կատարող/ ի դեմս տնօրեն Տ.Մարտիրոսյանի , մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /վարսավիրական կեցարան, շարժադարակի ձեռք բերում 214000 դրամ/:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով/ներով/:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N: 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա/ Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպայմանաժ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ/ Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանարի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա/ մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N: 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ/ խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**4.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

4.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

4.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

4.3 Կատարողն իրավունք ունի՝

4.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

4.4 Կատարողը պարտավոր է

4.4.1 Սույն պայմանագրի N: 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

4.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

4.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

5. Ապրանքի գինը և վճարման կարգը

5.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 214000(երկու հարյուր տասչորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-և:Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ

վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմիցիրականացվող բոլոր ծախսերը:Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջելավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

5.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամականմիջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթեարձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցովտվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքիդիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամականմիջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 25-ը:

6. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

7. Ապրանքի հանձնումը և ընդունումը

7.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածումնշված ծավալներով և ժամկետներում:

7.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքումԳնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ /Հավելված N 4/:

7.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա օրյաժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունմանարձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունմանարձանագրությունը ստորագրելու պահից:

8. Կողմերի պատասխանատվությունը

8.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարմանժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում էտույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջհինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

8.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում նիաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

8.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք` Պայմանագրիընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

8.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համարԳնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ` վճարմանենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

8.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորություններըչկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրայինպարտավորությունները լրիվ կատարելուց:

9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելուհամար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժիազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէինկարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքականհուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետականմարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրովպարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասինխնախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

10. Այլ պայմաններ

10.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումներիմասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբհսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծփաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապայդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումներիմասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանայինՊայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծմանհետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկՎաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգովփոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումըգնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

10.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 30.12.2016.:Պայմանագրից ծագած` կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլպայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր նկնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

10.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության ՀայաստանիՀանրապետության դատարաններում:

10.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերիփոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրիանբաժանելի մասը:Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում ենգնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխմանդեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

10.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետըլրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

10.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալպայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխողպարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդելպայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխողպարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդգործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համարպատասխանատու է Վաճառողը:

10.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակիչկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ`բացառությամբ`

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումըկատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծմանկողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան ՀայաստանիՀանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համարանհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան բսան տոկոսովփոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվիճնախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

10.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցություններիմիջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ԵՐևԱՆԻ ԹԻՎ 6 ԱՐՀ. ՊԵՏ. ՈՒՍ. ՊՈԱԿ | "Բյութի Պլանետ " ՍՊԸ |
| ք. Երևան, Հաղթության 3 | ք. Երևան, Մաշտոցի պողոտա 18 |
| ՀՎՀՀ 01202966 | ՀՎՀՀ 02550099 |
| Բանկ` ԱՇԻԲ Մալաթիա մասնաճյուղ | Բանկ` Յունիբանկ Ամիրյան մ/ճ |
| h/h 2474233154790010 | h/h 24106102703300 |
| Տնօրեն Ս. Գրիգորյան | Տնօրեն Տ. Մարտիրոսյան |